КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Բանավոր քալամից թվային տեքստ. ահլ է հաղղի սրբազան գրականության հանրայնացումը որպես կրոնական ադապտացիա

Առուշանյան Արփինե Ա.
արևելագիտության ֆակուլտետ, իրանագիտության ամբիոնի դասախոս,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0006-4975-5617
a.arushanyan@ysu.am

ՀՏԴ՝ 2-23; **EDN:** IYIKZU
DOI: 10.58587/18292437-2026.5-169
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Ահլ-է հաղղ, յարեսան, քալամ, դաֆթար, Սարանջամ, տպագրություն, թվայնացում, կրոնական ադապտացիա, կանոնիկացում, կրոնական հեղինակություն

От устного калама к цифровому тексту: публикация сакральной литературы ахл-э хакк как форма религиозной адаптации

Арушанян Арпине А.
Преподаватель кафедры иранистики факультета востоковедения,
Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. В статье рассматривается историческая трансформация способов передачи сакральной литературы ахл-э хакк, или ярсана: от устного калама к рукописному дафтару, печатному сборнику и цифровой копии. Цель исследования — определить, как смена носителя повлияла на сохранение, доступность и канонизацию текстов, а также на религиозный авторитет. Источниковедческий и сравнительно-исторический анализ показывает, что печать и оцифровка не являются нейтральным воспроизведением сакрального материала: каждый этап предполагает отбор вариантов, классификацию и интерпретационное посредничество. Печатная книга расширила аудиторию каламов и создала новые формы авторитета редактора, переводчика и автора-комментатора. Цифровая копия ускорила этот процесс и преодолела географические границы, но перенесла в онлайн-среду прежние редакционные решения и споры об аутентичности. Публичное обращение текстов интерпретируется как форма религиозной адаптации и сохранения через трансформацию.
Ключевые слова и словосочетания: Ахл-э Хакк, ярсан, калам, дафтар, Саранжам, печать, оцифровка, религиозная адаптация, канонизация, религиозный авторитет

From Oral Kalām to Digital Text: The Publication of Ahl e Haqq Sacred Literature as Religious Adaptation

Arushanyan Arpine A.
Lecturer at the Chair of Iranian Studies, Faculty of Oriental Studies,
Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. This article examines the historical transformation of the transmission of Ahl-e Haqq, or Yāresān, sacred literature from oral kalām to manuscript daftar, printed collection, and digital copy. It asks how changes of medium affected preservation, access, canonization, and religious authority. Source-critical and comparative historical analysis shows that printing and digitization are not neutral reproductions of sacred material: each stage entails selection among variants, classification, and interpretive mediation. Print widened access to formerly restricted kalāms, encouraged the formation of bounded textual collections, and turned editors and translators into new mediators of religious knowledge. Digitization accelerated this process across geographical boundaries, while carrying earlier editorial choices and disputes over authenticity into the online environment. The article argues that the public circulation of texts constitutes a form of religious adaptation best described as preservation through transformation.
Keywords & phrases: Ahl-e Haqq, Yāresān, kalām, daftar, Saranjām, printing, digitization, religious adaptation, canonization, religious authority

Ներածություն

Ահլ-է Հաղղի կամ յարեսանի կրոնական ավանդույթում սրբազան գիտելիքի հիմնական կրողը երկար ժամանակ եղել է բանավոր խոսքը՝ քալամը: Դրա հեղինակությունը ձևավորվել է ոչ միայն բովանդակությամբ, այլև արտասանողի դիրքով, կատարման միջավայրով և համայնքային ճանաչմամբ: Ձեռագիր դաֆթարների,

տպագիր ժողովածուների և, ավելի ուշ, թվային պատճենների տարածումը փոխել է այդ համակարգը: Տեքստը դարձել է համեմատելի, բազմացվող և հասանելի այնպիսի ընթերցողների, որոնք անմիջական կապ չունեն դրա ավանդական կրողների հետ: Հետևաբար կրիչի փոփոխությունը վերաբերում է ոչ միայն պահպանման տեխնիկային, այլև կանոնի, գաղտնիության, իսկության և կրոնական իրավասության սահմաններին:

Հոդվածի նպատակն է պատմական աղբյուրագիտության և համեմատական-պատմական մոտեցման հիման վրա վերականգնել այս փոփոխության հիմնական փուլերը և պարզել, թե տպագրությունն ու թվայնացումը ինչպես են դարձել ահլ-է հաղղի կրոնական աղապտացիայի միջոցներ: Համադրվել են ահլ-է հաղղի քալամների ու դաֆթարների գիտական հրատարակությունները, հեղինակային դավանաբանական աշխատությունները և ուսումնասիրություններ՝ նվիրված սրբազան տեքստերի փոխանցմանը: Վերլուծական շրջանակը ձևավորվել է Վ. Օնգի՝ բանավոր և գրավոր մշակույթների հարաբերության, Ֆ. Ռոբինսոնի՝ տպագրության կրոնափոխիչ ազդեցության և թվային կրոնի միջավայրում հեղինակության փոփոխության վերաբերյալ մոտեցումների համադրմամբ: Թվայնացումը դիտարկվում է ոչ որպես ինքնուրույն տեխնիկական իրադարձություն, այլ որպես բանավոր խոսքից ձեռագիր ու տպագիր գիրք անցնելու երկարատև գործընթացի նոր փուլ: Հոդվածը չի հավակնում վերականգնելու ահլ-է հաղղի ամբողջ տեքստային ժառանգությունը. մի շարք ձեռագրերի և փոքր տպաքանակով հրատարակությունների սահմանափակ հասանելիության պատճառով քննությունը կենտրոնանում է ստուգելի հրատարակությունների և դրանց վերաբերյալ հետազոտությունների վրա:

Ահլ-է հաղղի սրբազան ավանդույթի սկզբնական գոյության ձևը գրավոր աղբյուրը չէր: Կրոնական տեքստերի ստեղծումը, պահպանումն ու փոխանցումը երկար ժամանակ իրականացվել են բանավոր, իսկ ձեռագիր և տպագիր ժողովածուները ձևավորվել են համեմատաբար ուշ: Բանավոր ավանդույթը, սակայն, չպետք է ընկալել որպես գրավոր աղբյուրի բացակայությամբ պայմանավորված անկատար փուլ: Այն սրբազան գիտելիքի կազմակերպման ինքնուրույն համակարգ էր, որտեղ կրոնական չափածո տեքստի՝ քալամի հեղինակությունը պայմանավորված էր ոչ միայն դրա բովանդակությամբ, այլև արտասանող անձով, կատարման միջավայրով և տվյալ տարբերակի համայնքային ճանաչմամբ [**9**, էջեր 338-339]:

Այս հանգամանքը սկզբունքային նշանակություն ունի բանավոր տեքստի գրառման և տպագրության հետևանքները գնահատելու համար: Ըստ Վ. Օնգի տեսության՝ գրավոր ամրագրումը ոչ թե պարզապես պահպանում է բանավոր խոսքը, այլ կտրում է այն կատարման միջավայրից և փոխում գիտելիքի ձևավորման ու ընկալման եղանակները: Գրառումը բանավոր խոսքի չեզոք արձանագրում չէ. այն ենթադրում է տարբերակներից մեկի ընտրություն, տեքստի սահմանների և հատվածների հաջորդականության որոշում, լեզվական տարբերությունների կարգավորում: Այլ կերպ ասած՝ բանավոր տեքստի «առարկայացում». հիշողության մեջ գոյություն ունեցող խոսքը վերածվում է տեքստի, որը հնարավոր է ընթերցել, համեմատել և քննել: Եթե բանավոր միջավայրում մի քանի տարբերակներ կարող են զուգահեռաբար գոյություն ունենալ, ապա գրավոր ժողովածու կազմողը ստիպված է դրանցից որևէ մեկն ընտրել կամ արտոնյալ դարձնել [**10**, էջեր 77–116]:

Ուստի այստեղ գլխավոր հարցը ոչ միայն այն է, թե երբ և ում կողմից են գրի առնվել ու հրատարակվել ահլ-է հաղղերի սրբազան տեքստերը, այլև՝ ինչպես են այդ գործընթացները փոխել կրոնական ավանդույթը: Գրավոր ամրագրումը նպաստել է քալամների պահպանմանն ու տարածմանը, սակայն միաժամանակ վերաձևակերպել է տեքստի, ծիսական կատարման և կրոնական հեղինակության հարաբերությունները: Տպագրությունը, ընդլայնելով կրոնական գիտելիքի հասանելիությունը, կարող է միաժամանակ նպաստել դրա համակարգմանն ու վերափոխել գիտելիքի ավանդական կրողների հեղինակությունը: Հիշողությամբ փոխանցվող գիտելիքի կողքին ձևավորվում է գրավոր տեքստի վրա հիմնված հեղինակություն, իսկ ձեռագրերի ու հրատարակությունների կազմողները դառնում են ավանդույթի ընտրության, դասակարգման և մեկնաբանման նոր դերակատարներ [**12**, էջեր 229–251]:

Քալամից դեպի ձեռագիր դաֆթար - Ահլ-է հաղղերի սրբազան ավանդույթի հիմնական միավորը քալամն է: Եզրույթը բառացի նշանակում է «խոսք» կամ «ասույթ», սակայն կրոնական համատեքստում բնորոշում է աստվածային ծագում և սրբազան հեղինակություն ունեցող խոսքը: Դաֆթարն, իր հերթին, հիմնականում վերաբերում է այդ խոսքի գրավոր ամրագրմանը [**14**, էջ 19]: Ուստի հասկացությունները համարժեք չեն. քալամը մատնանշում է խոսքի սրբազան բնույթը, իսկ դաֆթարը՝ դրա գրավոր ձևը [**15**, էջեր 57-58]: Այդուհանդերձ, եզրույթների ներհամայնքային կիրառությունը միշտ չէ, որ միանշանակ է: Քալամ կարող են անվանվել և՛ կրոնական գիտելիքի հիմնական կրող երկար չափածո տեքստերը, և՛ ջամի ընթացքում երգվող համեմատաբար կարճ ստեղծագործությունները: Հետազոտական գրակա-

նության մեջ վերջիններս հաճախ առանձնացվում են նազմ անվամբ: Դաֆթար և դոուրե եզրույթները ևս երբեմն գործածվում են երկար քալամների կամ դրանց առանձին խմբերի համար [**7**, էջ 333]: Տերմինաբանական այս խառնաշփոթն արտացոլում է կենդանի փոխանցման պայմաններում ձևավորված ավանդույթ, որտեղ տեքստերի սահմաններն ու ժանրային պատկանելությունը նախապես ամրագրված չէին գրքային դասակարգմամբ:

Քալամի կրոնական նշանակությունը չի սահմանափակվում բառերի ուղղակի իմաստով: Սրբազան պատմությունները ներկայացվում են սեղմ, խորհրդանշական և ակնարկային ձևով, ուստի դրանց ըմբռնումը պահանջում է բաթենային իմաստի բացահայտում: Միայն լեզվի իմացությունը բավարար չէ. անհրաժեշտ է նաև իմանալ այն առասպելները, դոուրեները, մարմնավորումների հաջորդականությունը և ներհամայնքային մեկնությունները, որոնց քալամը հղում է կատարում՝ առանց դրանք շարադրելու: Ֆ. Քրեյենբրուքի դիտարկմամբ՝ համայնքի անդամների մեծ մասը ընդհանուր պատկերացում ունի առասպելների և սրբազան պատմության մասին, մինչդեռ քալամներում ամփոփված խորքային գիտելիքը բացահայտվում է կրոնի գիտակների մեկնաբանությունների միջոցով: Կրոնական քննարկումների ընթացքում սեյյեդներն ու մյուս գիտակներն իրենց մեկնաբանությունները հաճախ հիմնավորում են քալամներից հատվածներ մեջբերելով՝ այդպիսով սրբազան խոսքը դարձնելով նաև մեկնության հավաստիության չափանիշ [**7**, էջեր 335-337]:

Լեզվական փոփոխությանը հարմարվելու մյուս միջոցը քալամների թարգմանությունն ու գրավոր մեկնությունն է: Սեյյեդ Մոհամմադ Հոսեյնիի "Tarǰome va Tafsīr-e Dīvān-a Gawra" աշխատությունը դրա վառ օրինակն է. գուրանի բնագիրը պահպանվում է որպես սրբազան խոսքի հեղինակավոր ձև, իսկ պարսկերեն թարգմանությունն ու մեկնաբանությունը տեքստը հասանելի են դարձնում գուրանի չիմացող ընթերցողին: Սակայն այս գործընթացը նաև նոր հեղինակություն է հաղորդում թարգմանչին և մեկնաբանին, քանի որ նրանք են ընտրում բառերի համարժեքները և որոշակիացնում գաղտնի գիտելիքին վերաբերող հատվածների իմաստը:[1]

Սրբազան տեքստի կանոնիկացումը և ձեռագրային հեղինակությունը - Ահլ-է հաղղերի սրբազան գրականությունը չի սահմանափակվում մեկ գրքով: Այն ներառում է տարբեր դոուրեների, սրբազան կերպարների և խանդանային ավանդույթների հետ կապված ժողովածուներ: Մեր նպատակը դրանց բովանդակության ամբողջական նկարագրությունը չէ, այլ այն հարցի քննությունը, թե արդյոք այդ բազմազան ժառանգությունը կազմել է միասնական և հստակ սահմանված սրբազան կանոն:

Ժամանակակից աշխատություններում «Սարանջամը» հաճախ ներկայացվում է որպես միասնական սուրբ գիրք՝ "Kalām-e Saranǰām", "Nāme-ye Saranǰām", "Kalām-e Xazāne" կամ "Dīwān-a Gawra" անվանումներով: Այս անունները վերաբերում են մեծ մասամբ ընդհանուր տեքստային միջուկին, սակայն պարտադիր չէ, որ նշանակեն կազմով ու կառուցվածքով նույնական ժողովածուներ: Հետևաբար ժամանակակից գրքային ձևը վաղ ավանդույթին վերագրելը կարող է տպավորություն ստեղծել, թե ահլ-է հաղղերը միշտ ունեցել են մեկ վերնագրով, վերջնական կազմով և ընդհանուր ճանաչում ունեցող սուրբ գիրք: Քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ վաղ տեքստային ավանդույթին բնորոշ էր առանձին քալամների և դաֆթարների շրջանառությունը, իսկ միասնական «Սարանջամի» պատկերացումն առավել որոշակի ձև է ստացել դրանց հետագա հավաքման ու դասակարգման ընթացքում [**16**, էջեր 47-50, 55-56, 68-70]:

Նույն տարբերակայնությունը կա նաև ժամանակակից ժողովածուներում, որոնք տարբերվում են քալամների թվով, հաջորդականությամբ և ներքին բաժանմամբ: Դրանց միջև առկա ընդհանրությունները վկայում են լայնորեն ճանաչված տեքստային միջուկի գոյության մասին, իսկ տարբերությունները՝ դրանց ընտրության և կազմակերպման տարբեր սկզբունքների: Ուստի այս ժողովածուները հարկ է դիտարկել ոչ թե որպես մեկ անփոփոխ նախատեքստի պարզ վերարտադրություններ, այլ որպես ընդհանուր ավանդույթի տարբեր խմբագրություններ [**13**]: Ուստի ահլ-է հաղղերի սրբազան կանոնը պետք է հասկանալ ոչ թե որպես մեկ անգամ ընդմիշտ փակված գիրք, այլ որպես աստիճանաբար ձևավորված տեքստային դաշտ: Դրա սահմանները պայմանավորված էին քալամների հայտնութենական ծագման մասին պատկերացումներով, համայնքային ճանաչմամբ, ծիսական կիրառությամբ, կրոնական գիտակների հեղինակությամբ և տարբեր խանդանների փոխանցման ավանդույթներով: Այս կառուցվածքը միաժամանակ

[1] Սեյյեդ Մոհամմադ Հոսեյնիի աշխատությունը մեր տրամադրության տակ չի եղել Իրանում հրատարակված մասնագիտական գրականության սահմանափակ միջազգային շրջանառության, գրքի թվային տարբերակի բացակայության, Իրանի ներկայիս քաղաքական իրավիճակով պայմանավորված ձեռքբերման դժվարությունների պատճառով: Մենք դրան ծանոթացել ենք միջնորդավորված [**7**, էջեր 335-337]: Աղբյուրի ամբողջական տվյալներն են Seyyed Mohammad Hoseyni, Tarǰome va Tafsīr-e Dīvān-a Gawra, 2 vols. (Tehran: Porsemān, 1395 Sh./2016): Մատենագիտական գրառումը հասանելի է Google Books-ում:

ապահովում էր ավանդույթի շարունակականությունն ու թույլ տալիս նոր տեքստերի ներառում՝ ըստ կրոնական և սոցիալական փոփոխությունների:

Ձեռագրերի թվի աճը նաև առաջացնում էր դրանց հավաստիությունը որոշելու անհրաժեշտություն: Ահլ-է հաղղի որոշ համայնքներում, մասնավորապես Հեյդարիում, ձեռագրերի համեմատումը և իսկության ստուգումը հայտնի էր "սառռաֆի-յե դաֆթար" (ṣarrāfī-ye daftar) անվամբ: Ստուգված օրինակը հաստատվում էր կնիքով և ստորագրությամբ, որով ձեռագրի հեղինակությունը կապվում էր այն հավաստիացրած անձի կամ խանդանի հետ: Հետևաբար «վավեր» քալամը որոշվում էր ոչ միայն իր բովանդակությամբ, այլև փոխանցման ստուգված շղթայով [**16**, էջ 67]:

Տպագրությունը և սրբազան տեքստերի հանրայնացումը – Ինչպես ցույց տվեց ձեռագրային ավանդույթի քննությունը, ահլ-է հաղղերի սրբազան տեքստերի ընտրությունը, համեմատումն ու հավաստիացումը սկսվել էին դեռևս դրանց տպագրությունից առաջ: Տպագրությունը շարունակեց այդ գործընթացը, սակայն փոխեց դրա մասշտաբն ու հետևանքները: Ձեռագրային միջավայրում տեքստի հեղինակությունը կապված էր այն պահպանող և հավաստիացնող խանդանի հետ, տպագիր գրքի պարագայում որոշիչ դեր ստացան նաև խմբագիրը, հրատարակիչը, թարգմանիչը և հետագոտողը: Միաժամանակ նախկինում սահմանափակ շրջանառվող քալամները հասանելի դարձան ավելի լայն համայնքային և գիտական լսարանի:

Ահլ-է հաղղերի տեքստերի առաջին հրապարակումները իրականացվել են ակադեմիական միջավայրում: Վ. Մինորսկին 1920 թ. նկարագրեց իրեն հասանելի կրոնական նյութերը և գիտական շրջանառության մեջ դրեց առանձին քալամներ ու տեքստային հատվածներ [**8**]: Վ. Իվանովն այս աշխատանքը շարունակեց առավել ընդարձակ տեքստային հիմքով: Նրա հավաքած նյութերի պարսկերեն բնագրերը նախ հրատարակվեցին 1950 թ. "Maǰmūʿa-yi Rasāʾil va Ashʿār-i Ahl-i Ḥaqq" վերնագրով, իսկ 1953 թ. "The Truth-Worshippers of Kurdistan: Ahl-i Haqq Texts" աշխատության մեջ նույն ժառանգությունը ներկայացվեց աղբյուրագիտական և կրոնագիտական քննությամբ [**4**]:

Սրբազան տեքստերը ամբողջական գրքային ձևով ներկայացնելու առավել նշանակալի փորձերից է Ս. Սաֆիզադեի՝ 1996 թ. "Nāme-ye Saranǰām yā Kalām-e Xazāne" ժողովածուն, որը հեղինակը բաժանել է վեց մասի և ներկայացրել որպես ահլ-է հաղղի կարևորագույն ու սրբազան գիրք: Սակայն հրատարակչի իսկ նկարագրությունից պարզվում է, որ ժողովածուն կազմվել է տարբեր բնակավայրերում հայտնաբերված մի քանի ձեռագրերի արտագրման, ընթերցման, համեմատման և մեկնաբանման միջոցով: Հետևաբար հրատարակությունը մեկ անփոփոխ ձեռագրի պարզ վերարտադրություն չէր. խմբագիրը ընտրել է տարբերակները, որոշել դրանց հաջորդականությունը և դրանցից կառուցել հարաբերականորեն միասնական տեքստային ամբողջություն [**13**]:

Այս գործընթացը կարելի է մեկնաբանել Վ. Օնգի՝ տպագրության և տեքստային «փակվածության» վերաբերյալ դիտարկումների միջոցով: Տպագիր գիրքը տեքստին տալիս է տեսանելի սահմաններ, հաջորդականություն և հարաբերական ավարտունություն: Ահլ-է հաղղերի դեպքում դա հատկապես կարևոր էր, քանի որ բանավոր և ձեռագրային ավանդույթում միևնույն քալամի տարբերակները կարող էին զուգահեռաբար գոյություն ունենալ՝ առանց դրանցից մեկը վերջնական ճանաչելու անհրաժեշտության: Տպագիր ժողովածու կազմողն արդեն պարտավոր էր ընտրել տարբերակներից մեկը, որոշել տեքստերի դասավորությունը և սահմանել գրքի բովանդակությունը [**10**, էջեր 117-138]:

Այսպիսով՝ տպագրությունը Ահլ-է հաղղերի համար միաժամանակ պահպանման և կրոնական ադապտացիայի միջոց էր: Այն ապահովեց տեքստերի նյութական շարունակականությունը և ընդլայնեց դրանց լսարանը, բայց նաև ամրագրեց որոշակի խմբագրական ընտրություններ, ստեղծեց հարաբերական ամբողջականության պատկեր և վերադասավորեց կրոնական հեղինակության աղբյուրները: Եթե այս հրատարակությունները հիմնականում նպատակ ունեին հավաքելու և պահպանելու արդեն գոյություն ունեցող սրբազան ժառանգությունը, ապա համայնքի անդամներ Ջեյհունաբադիի և Նուր Ալի Էլահիի հեղինակային աշխատություններում տպագիր գիրքը ստացավ մեկ այլ՝ ավանդույթը համակարգելու և բարեփոխելու գործառույթ:

Ջեյհունաբադիի "Ḥaqq al-Ḥaqāyeq yā Šāhnāme-ye Ḥaqīqat"-ը ավելի քան 15.000 պարսկերեն չափածո տողից կազմված ծավալուն աշխատություն է, որը Մոհամմադ Մուքրին խմբագրել և հրատարակել է 1966 թ.՝ «Le Livre des Rois de Vérité» խորագրով՝ մեկ պատումի մեջ միավորելով ահլ-է հաղղերի սրբազան պատմությունը, աստվածային դրսևորումները, գլխավոր կերպարներին և կրոնական պատկերացումները: Ի տարբերություն զուրանի քալամների սեղմ կառուցվածքի՝ այստեղ տարբեր դռուրեների պատումները ներկայացվում են մեկ հեղինակային շարադրանքի շրջանակում [**5**]: Միաժամանակ այն փոխում է սրբազան պատմության կառուցվածքը: Տարբեր ժամանակնե-

րում ձևավորված պատումները ներկայացվում են որպես շարունակական և պատճառաբանված ամբողջություն, իսկ հեղինակը ստանձնում է դրանք ընտրելու, հաջորդականացնելու և մեկնաբանելու գործառույթը: Այդ պատճառով աշխատությունը չի կարելի դիտարկել որպես քալամների չեզոք վերարտադրություն: Այն ահլ-է հադիսների պատմության հեղինակային վերակառուցում է, որով բազմակի ավանդույթը ստանում է միասնական ժամանակագրական պատկեր: Միր-Հոսեյնին այս նախաձեռնությունը կապում է Ջեյհունաբադիի՝ համայնքի տարբեր ավանդույթները միավորելու, գաղտնիության սահմանները թուլացնելու և դրանց շիայական ծագումնաբանություն հաղորդելու փորձի հետ [**9**, էջեր 214; 221-222; **11**, էջեր 193-216]:

Այս ուղղությունն առավել համակարգված ձև է ստանում Նուր Ալի Էլահիի “Borhān al-Ḥaqq”-ում, որն առաջին անգամ հրատարակվել է 1963 թ.: Այստեղ առանձին գլուխներով ներկայացվում են ահլ-է հադիսների պատմությունը, տիեզերաբանությունը, աստվածային դրսևորումը, հոգու հաջորդական մարմնավորումները, ծեսերը, կրոնական աստիճաններն ու հիմնական եզրույթները: Ակնարկային քալամների փոխարեն ընթերցողին առաջարկվում է սահմանումներով և բացատրություններով կառուցված դավանաբանական երկ: Հետևաբար Borhān al-Ḥaqq-ը ոչ միայն տեղեկություն է հաղորդում ավանդույթի մասին, այլև սահմանում, թե դրա տարբեր պատկերացումներն ինչպես պետք է դասավորվեն մեկ համակարգում [**2**]:

Այսպիսով, Ջեյհունաբադիի և Էլահիի գործերի տպագրությունը բարեփոխման միջոց է երեք փոխկապակցված մակարդակներում: Այն բազմակի պատումները վերածում է միասնական պատմության, ակնարկային գիտելիքը՝ համակարգված դավանաբանության, իսկ ներհամայնքային գաղտնի խոսքը՝ ավելի լայն լսարանին ուղղված հրապարակային խոսքի: Սակայն այդ ադապտացիան միաժամանակ ստեղծում է նոր հակադրություններ՝ ավանդական և անհատական հեղինակների, խանդանային բազմազանության և միասնական ուսմունքի, ինչպես նաև ինքնուրույն կրոնական ինքնության ու շիայական միջավայրին հարմարվելու միջև:

Թվային պատճենը և կրոնական ադապտացիայի նոր փուլը – Ահլ-է Հաղղի տեքստային ժառանգության թվայնացումը պետք է դիտարկել բանավոր խոսքից ձեռագիր և տպագիր գիրք անցման ավելի երկար պատմության մեջ: Թվային պատճենը պարզապես նոր կրիչ չէ. այն փոխում է նյութի պահպանման, բազմացման, որոնման և համեմատության հնարավորությունները: Եթե ձեռագիր քալամը հասանելի էր սահմանափակ թվով կրողների, իսկ տպագիր ժողովածուն՝ արդեն ավելի լայն ընթերցող շրջանակի, ապա սկանավորված գիրքը կամ լուսանկարված ձեռագիրը կարող է միաժամանակ շրջանառվել տարբեր երկրներում: Այս իմաստով թվայնացումը շարունակում է սրբազան խոսքի առարկայացման ընթացքը, բայց այն հասցնում է անհամեմատ ավելի արագ և աշխարհագրորեն ապակենտրոն շրջանառության մակարդակի [**7**, էջեր 336-339]:

Թվայնացման ամենաակնհայտ արդյունքը նյութական օրինակի կորստի վտանգի նվազեցումն է: Թվային պատճենները հնարավորություն են տալիս պահպանել հազվագյուտ հրատարակություններ, նույն քալամի տարբեր ընթերցումները դնել կողք կողքի և տեքստը հասանելի դարձնել Իրանից ու Իրաքից դուրս ապրող համայնքի անդամներին և հետազոտողներին: Այս հնարավորությունը հատկապես կարևոր է փոքր տպաքանակով տպված, չվերահրատարակված կամ մասնավոր հավաքածուներում պահպանվող որոշ գրքերի համար: Թվային շրջանառությունը այդպիսով թուլացնում է տեքստի՝ ֆիզիկական վայրից և այն պահպանող ընտանիքից կախվածությունը: Սակայն թվային պատճենը ինքնին քննադատական հրատարակություն չէ: Այն վերարտադրում է արդեն իսկ որևէ խմբագրի կատարած ընտրությունը՝ որ ձեռագրերը համադրել, ինչ հերթականությամբ դասավորել նյութը և որ տարբերակն ընդունել որպես հիմնական: Քանի որ Սարանջամի և մյուս ժողովածուների հրատարակությունները տարբերվում են ընդգրկված տեքստերով ու դասավորությամբ, դրանց թվայնացումը ոչ թե վերացնում, այլ առցանց միջավայր է տեղափոխում կանոնացման նախորդ փուլերում կատարված ընտրությունները: Միաժամանակ նյութի վերնագիրը, նկարագրությունը և հրապարակող էջը կարող են ստեղծել իսկության նոր տպավորություն՝ առանց ձեռագրի ծագման կամ խմբագրական պատմության բացահայտման:

Լեզվական փոփոխությունը թվային պահպանման առջև մեկ այլ խնդիր է դնում: Գրական գուրանիի գործուն իմացության նվազման պայմաններում միայն թվայնացված գրքի էջի պատկերը պահպանելը դեռ չի ապահովում բովանդակության հասանելիությունը: Լիարժեք թվային հրատարակությունը պետք է բնագրի կողքին ներառի վստահելի վերծանում, բառարանային բացատրություն, թարգմանություն, տարբերակի ծագման տվյալներ և, հնարավորության դեպքում, բանավոր մեկնաբանության արձանագրություն: Հակառակ դեպքում թվային արխիվը պահպանում է նշանների պատկերը, բայց ոչ դրանց մեկնաբանական կյանքը [**7**, էջեր 151-168]:

Թվայնացումը վերաձևավորում է նաև կրոնական հեղինակությունը: Նյութի տարածման վրա ազդեցություն է ձեռք բերում նա, ով

ընտրում է սկանավորվող օրինակը, անվանում ու դասակարգում նյութը, պատրաստում թարգմանությունը կամ այն տեղադրում առցանց հարթակում: Այդ դերակատարները չեն փոխարինում սեյյեդին, քալամխանին կամ դաֆթարդանին նույն գործառույթով, բայց նրանց կողքին ձևավորում են արխիվային և թվային միջնորդության նոր իրավասություն: Ընթերցողը կարող է ինքնուրույն համեմատել տարբեր գրքեր, սակայն դրանց գաղտնի իմաստի ըմբռնումը շարունակում է պահանջել լեզվական ու ներհամայնքային գիտելիք: Հետևաբար հասանելիության ընդլայնումը չի վերացնում մեկնաբանության կարիքը, այլ փոխում է պայմանները, որոնցով մեկնաբանը հիմնավորում է իր հեղինակությունը [**1**]:

Թվային միջավայրում փոխվում են նաև ներքին և արտաքին լսարանների սահմանները: Փակ խմբում կամ համայնքային ալիքում հրապարակված նյութը կարող է պատճենվել և տարածվել սկզբնական լսարանից դուրս: Միաժամանակ գաղտնիությունը կարող է պահպանվել ընտրովի հրապարակման միջոցով՝ ներկայացվում են առանձին հատվածներ, գործածվում է միայն գուրանի բնագիրը կամ նյութը շրջանառվում է այնպիսի մեկնաբանական կոդերով, որոնք լիովին հասկանալի են նախնական գիտելիք ունեցողներին: Այսպիսով թվայնացումը ոչ թե պարզապես վերացնում է գաղտնիքը, այլ վերակազմավորում է հրապարակայնության սահմանները և ավելի տեսանելի դարձնում այն վեճը, թե ով, ինչ նյութ և ինչ բացատրությամբ կարող է ներկայացնել համայնքից դուրս [**3**, էջեր 11-18]:

Ուստի տեքստային թվայնացման արժեքը որոշվում է ոչ միայն նյութերի քանակով: Կայուն պահպանումը պահանջում է աղբյուրի նկարագրություն, տարբերակի ու խանդանային պատկանելության նշում, խմբագրական պատմություն, հասանելիության համապատասխան աստիճաններ և համայնքի կրոնական ու բարոյական սահմանների հաշվառում: Առանց այդ շերտերի թվային նյութը կարող է արագ տարածվել, բայց կորցնել աղբյուրային վստահելիությունը կամ անհետանալ հարթակի փակման, հաշվի ջնջման և տեխնիկական հնացման հետևանքով: Թվայնացումը պահպանման միջոց է միայն այն դեպքում, երբ պատճենը վերածվում է նկարագրված, համատեքստավորված և երկարաժամկետ պահպանվող աղբյուրի:

Եզրակացություն

Ահլ-է հաղղի սրբազան գրականության պատմությունը չի ներկայացնում բանավոր մշակույթից դեպի գրավոր կամ թվային մշակույթ միագիծ անցում: Քալամները շարունակել են ապրել ծիսական կատարման և բանավոր մեկնաբանության մեջ նույնիսկ ձեռագիր ու տպագիր ժողովածուների տարածումից հետո: Փոխվել են դրանց գոյության ձևերի հարաբերությունները. ձեռագիրը, գիրքը և թվային պատճենը բանավոր խոսքի կողքին ստեղծել են հիշողության, համեմատության և հիմնավորման նոր հենարաններ:

Տպագրությունը կատարել է փոխկապակցված չորս գործառույթ՝ պահպանել է բանավոր ու ձեռագրային ժառանգությունը, կանոնացրել ընտրված տարբերակները, հնարավորություն տվել հեղինակային բարեփոխումների և ծառայել համայնքային ինքնաներկայացմանը: Թվայնացումը շարունակել ու արագացրել է այդ գործառույթները՝ հաղթահարելով աշխարհագրական և նյութական սահմանափակումները: Սակայն ոչ տպագրությունը, ոչ թվայնացումը չեզոք չեն. պահպանումն ուղեկցվում է ընտրությամբ, հասանելիությունը՝ գաղտնիության սահմանների վերանայումով, իսկ համակարգումը՝ որոշ տարբերակների արտոնմամբ:

Կրիչների փոփոխությունը վերադասավորել է նաև հեղինակության համակարգը: Սեյյեդների, քալամխանների և ձեռագրապահ ընտանիքների կողքին հանդես են եկել գրագիրները, խմբագիրները, թարգմանիչները, հեղինակ-մեկնաբաններն ու թվային արխիվի կազմողները: Ավանդական հեղինակությունը չի անհետացել, բայց այլևս հիմնավորվում է ոչ միայն տեքստին բացառիկ հասանելիությամբ, այլև տարբերակները համեմատելու, բնագիրը բացատրելու և նոր միջավայրում դրա իսկությունը հիմնավորելու կարողությամբ:

Այսպիսով ահլ-է հաղղի տեքստային հանրայնացումը կրոնական ադապտացիայի ձև է: Ավանդույթը պահպանվում է այն պատճառով, որ կարողանում է փոխել իր նյութական ու հաղորդակցական ձևերը՝ առանց ամբողջությամբ հրաժարվելու քալամից, կենդանի կատարումից և ներհամայնքային մեկնաբանությունից: Այս ընթացքը կարելի է բնորոշել որպես պահպանում՝ փոխակերպման միջոցով. սրբազան ժառանգությունը նոր կրիչներում ոչ միայն վերարտադրվում, այլև ընտրվում, դասակարգվում, հանրայնացվում և վերաիմաստավորվում է:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Campbell, Heidi A.** “Who’s Got the Power? Religious Authority and the Internet.” // Journal of Computer-Mediated Communication 12, no. 3 (2007): 1043–1062.
2. **Elahi, Nur Ali.** Borhān ol-Ḥaqq. – Tehran, 1983.
3. **Hosseini, S. Behnaz.** “An Ethnography of a Community’s Re-appropriation of Yārsān in Cyberspace: The Facebook Phenomenon.” // Journal of Religion, Media and Digital Culture 6, no. 1 (2017): 1–20.

4. **Ivanow, Wladimir.** The Truth-Worshippers of Kurdistan: Ahl-i Haqq Texts. – Leiden: Brill, 1953.
5. **Jeyḥūnābādī, Ḥājj Neʿmatollāh**. Le Livre des Rois de Vérité: Histoire traditionnelle des Ahl-e Haqq. Edited by Mohammad Mokri. – Paris: Klincksieck, 1966.
6. **Kreyenbroek, Philip G.** "The Religious Textual Heritage of the Yārsān (Ahl-e Haqq)." // Oral Tradition 35, no. 2 (2022): 331–340.
7. **Kreyenbroek, Philip G., and Behrooz Chaman Ara.** "Literary Gurāni: Koinè or Continuum?" // Kurdish Studies 1, no. 2 (2013): 151–168.
8. **Minorsky, Vladimir.** "Notes sur la secte des Ahlé-Haqq." Revue du monde musulman 40 (1920): 20–97.
9. **Mir-Hosseini, Ziba.** "Redefining the Truth: Ahl-i Haqq and the Islamic Republic of Iran." // British Journal of Middle Eastern Studies 21, no. 2 (1994): 211–228.
10. **Ong, Walter J.** Orality and Literacy: The Technologizing of the Word. 2nd ed. – London and New York: Routledge, 2002.
11. **Parim, Hossein Karimi, and Mohammad Amir Ahmadzadeh.** "A Study of the Position and Role of Nematollah Jeyhounabadi in the Historiography of the Ahl al-Haqq." // *Historical Perspective & Historiography* 34 (2025): 193–216.
12. **Robinson, Francis.** "Technology and Religious Change: Islam and the Impact of Print." // Modern Asian Studies 27, no. 1 (1993): 229–251.
13. **Ṣafīzāde, Ṣiddīq.** Nāme-ye Saranjām yā Kalām-e Xazāne. – Tehran: Hirmand, 1996.
14. **Sūrī, Māšāllāh.** Sorūdhā-ye Dīnī-ye Yārsān. – Tehran: Amir Kabir, 1965.
15. **Vali, Shahab.** "La littérature religieuse des Kurdes Yarsan." *Études kurdes*, no. 11 (March 2012): 57–64.
16. **Veisi Hasar, Rahman.** "Canonization and Sacred Text in the Yārsān Religion." // Iranian Studies 57, no. 1 (2024): 47–72.

Сдана / Հանձնվել է՝ 14.09.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 21.09.2026
Принята / Ընդունվել է՝ 28.09.2026